ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՕՐԵՐ

# Տեսակցութիւն «Հայ Դատ»ի Տղոց Հետ

Գրեց ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱՂԼԵԱՆ

*(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)*

*Բայց այդ 150-200 հոգին, ի տարբերութիւն մնացեալ մասսայի, շատ աւելի աղմկարար է եւ վտանգաւոր: Հենց դրա համար որ իրեն ներկայացնում է որպէս ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցիչ, հայ ժողովրդի կամքը: Ըստ որում, նրանք այնքան վտանգաւոր չէին լինի, եթէ Պ. Հայրիկեանի թիկունքում կանգնած չլինէին որոշակի ուժեր, որոնց ձեռնտու է ինչքան հնարաւոր է մեծ աղմուկ հանել այստեղ Հայաստանում: Հենց այդ ուժերը, այդ 150 հոգու ձայնը ներկայացնում են ամբողջ աշարհին որպէս հայ ժողովրդի ձայնը, կամքը:*

## «ՄԵՆՔ ԼՐԻՒ ՀԻՄՔԵՐ ՈՒՆԵՆՔ ԱՍԵԼՈՒ, ՈՐ ՀԱՅՐԻԿԵԱՆԸ ԾԱՌԱՅՈՒՄ ՉԷ ՀԱՅ ԱԶԳԻՆ»...

*Մեր ձայնը, ինչքան էլ ճչանք, ոչ ոք ոչ մի տեղ չի հասցնում: Ողջ մասսան հասկանում է, որ այս պրովոկացիոն քայլերը ուր են տանում եւ ինչի կարող են յանգեցնել: Մեր ձայնը չի հասնում համաշխարհային հասարակայնութեանը: Որովհետեւ մեր թիկունքում Սիոնիստական կոնգրէս չկայ կանգնած: Այո, մենք չենք ծառայում նրանց նպատակներին: Մենք ուզում ենք ծառայել մեր ժողովրդի իսկական նպատակին: Մենք «Ամերիկայի ձայն», «Իսրայէլի ձայն», եւ այլ ձայներ չունենք մեր տրամադրութեան տակ: Մեր կարծիքը չի հասնում համաշխարհային հասարակայութեանը: Պ. Հայրիկեանի կարծիքը, ձայնը հասնում է ամէն տեղ, էն էլ ժամանակին...*

*Երբ Պ. Հայրիկեանին արտաքսեցին, դա նոր ալիք առաջացրեց, աղմուկ-աղաղակ, պրոպագանդա: Նրա մասին խօսեցին աշխարհի բոլոր ռատիոկայաններով: Էդպէս էլ միանգամայն ծրագրուած էր: Նրան հարկաւոր էր ներկայացնել որպէս յուսապատակով հերոսի, տառապեալի եւ զոհի, եւ էդպէս էլ արին: Չեմ կարծում որ արտասահմանում բոլորն էլ յիմար ու մանկամիտ են ու այդ խաղը կուլ տուեցին: Պ. Հայրիկեանի արտաքսումը ծառայեց յօգուտ Պ. Հայրիկեանի գործունէութեան: Նա չպիտի արտաքսուէր: Արտաքսումը օգնեց նրան կողմնակիցներ հաւաքելու: Հիմա այստեղ՝ Երեւանում երբ որ խօսում են Պ. Հայրիկեանական արկածախնդրութեան դէմ, նրանք ասում են. «Դուք ինչու այստեղ հանգիստ նստած էք, իսկ նրան էդպէս էլ արտաքսեցին: Եթէ ճիշդը դուք լինէիք, ձեզ կ'արտաքսէին»: Որովհետեւ այս ժողովուրդը 70 տարուայ ընթացքում համոզուել է որ Ս. Միութիւնը ճիշդ բաներ չի անում: Ուստի, նրանք շատ լաւ գիտէին ժողովրդի հակազդեցութիւնը եւ դրա համար էլ նրան արտաքսեցին: Արի եւ ասա այդ երիտասարդ, անուսեղակ, քաղաքականապէս միամիտ ուսանողին, թէ Պ. Հայրիկեանը ճիշդ չէ: Չի՛ հասկանայ: 70 տարուայ ընթացքում, այն ինչ որ ասել են, արել են վերեւում՝ Կրեմլում, միշտ էլ սխալ է եղել: Արտաքսելով Պ. Հայրիկեանին, հայրիկեականների խօսքի արժէքաւորում ստացուեց:*

*Խելօք եւ խելացի մարդ է Պ. Հայրիկեանը, նա չի սխալւում: Նա գիտակցուած է անում իր գործունէութիւնը: Էդ պատճառով էլ նա կրկնակի յանցագործ է: Եթէ մէկը սխալմամբ է գործում, նրան կարելի է ներել կամ հասկացնել, բայց նա շատ լաւ գիտի թէ ինչի՞ է յանգեցնելու իր գործունէութիւնները եւ ինչի՞ է գնում: Դրա համար մենք լրիւ հիմքեր ունենք ասելու, որ նա ծառայում է ոչ թէ հայ ժողովուրդին, այլ սիոնիզմին:*

*Սիոնիզմի կապերը փան-թուրքիզմի հետ մեզ յայտնի են: Հայաստանը սեպի պէս խրուած է Միջին ասիական հանրապետութիւնների, Ատրպէյջանի եւ Թուրքիայի միջեւ: Նրանք այդ սեպը ուզում են վերացնեն: Եւ այդ վերացման հարցում սիոնիզմն ու փան-թուրքիզմը իրար հետ են գործում եւ Պ. Հայրիկեանը ծառայելով սիոնիզմին, ուզի-չուզի ծառայում է փան-թուրքիզմին: Այս ծառայութեան համար նրան պարգեւատրել են 25,000 ռուբլու գումարով:*

*Հ.- Ո՞վ է տուած այդ քան մեծ գումարը:*

*Պ.- Սիոնիստները, Մոսկուայի սիոնիստները: Դէ ուրիշ տուող չկայ: Հայ ժողովուրդի չի տուել: Այդ գումարը բերուել է Համբարձումի Գալստեանի միջոցով: Այս վերջինը ակտիվ քարոզ է տանում Պ. Հ.-ի համար եւ հանքանակութիւններ անում: Նա էլ կապուած էր Մոսկուայի սիոնիստական շրջանակների հետ: Պնդել չենք կարող: Տեղեկութիւններ կան որ Հ. Գալստեանը այդ գումարը յանձնել է Պ.Հ.-ին Սովետաշէնի բնակարանում: Մի այլ տուեալ մեզ հասել է նաեւ, թէ Հ. Գալստեանը «Ղարաբաղի Կոմիտէ»ի այժմու բոլոր անդամներին համար ստանում է ամսական աշխատավարձ, սիոնիզմի շրջաններից: Այդ ընկերները շատ ուժեղ են, մենք նրանց դէմ շատ թոյլ ենք: Այդ ընկերները կազմակերպեցին Խաչիկ Ստամբոլցեանի այսպէս ասած ողորմահաւաքութիւնը. ահռելի գումար հաւաքուեց:*

*Այդ գումարները անյայտ ուղղութեամբ են գնում. ոչ ոք հաշիւ չի տալիս: Ոչ ճշգրիտ տուեալներով մինչեւ 300,000 ռուբլի է հաւաքուել, իսկ ուրիշների ասելով՝ մինչեւ մէկ միլիոն: Խաչիկ Ստամբոլցեանը աղանդաւոր է, Հայկական Եկեղեցու դէմ է: Աղանդ է քարոզում Հայաստանում: Աղանդը շատ աւելի մօտ է Ցուդայականութեան, քան թէ մեր դարերի ընթացքում ազգայնացուած քրիստոնէական եկեղեցուն: Էդ ընկերն էլ հայրենասիրութիւն է խաղում: Ասպարէզը դարձել է մի բեմ, հայ ժողովուրդը խաղալիք է դարձել:*

*Հ.- Սկզբնական շրջանին ո՞վ կը գլխաւորէր Արցախեան շարժումը, եւ ի՞նչ էր նպատակը:*

*Պ.- Արցախեան շարժման՝ Իկոր Մուրատեանի (ընիկ ղարաբաղցի, Մարտակերտի շրջանից) սկսած շարժման միակ նպատակը, ես պիտի չեղտեմ, միակ նպատակը Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելն էր: Աստիճանաբար ներդրուեցին մարդիկ, սողոսկեցին: Օրինակ, երբ Իկոր Մուրատեանն էր «Ղարաբաղի Կոմիտէ»ի նախագահը եւ իր շուրջն էր համախմբուած, առաջինը ներս սողոսկեց Վազգէն Մանուկեանը, ներկայի փաստական ղեկավարը «Ղարաբաղի Կոմիտէ»ին: Նա սկսեց դրանով, որ Իկոր Մուրատեանին միկրոֆոն էր տալիս, բռնում էր: Լաֆէի պէս մարդ էր գալիս ետեւից հաթակում: Իկորը նրան վեր առաւ պաշտօնապէս «Ղարաբաղի Կոմիտէ»ի մէջ: Յաջորդը՝ Համբարձումի Գալստեանն է: Նրա կինը նոյնպէս հրեայ է եւ ապրում է Մոսկուայում: Պարզուել է որ Վազգէն Մանուկեանի տատն էլ է հրեայ: Լեւոն Տէր Պետրոսեանի կինն էլ է հրեայ: Ալեքսան Յակոբեանի կինը Մերձ-Պալթիկայից է, նրա գործունէութիւնը կասկածելի է, նա էլ կարող է հրեայ կապեր ունենայ:*

*Վազգէն Մանուկեանը, «Ղարաբաղի Կոմիտէ» մտնելուց յետոյ, ետեւից բերեց Համբարձումի Գալստեանին՝ ներկայացնելով Իկորին որպէս շատ նուիրուած, ծառայասէր մի մարդու:*

*Յանկարծ, Մարտի 19ին Իկորը սխալներ կատարեց, որոշ պրովակացիոն յայտարարութիւններ արեց: Նրանք Իկորին «պրավոկատոր» անուանելով ամբողջ ժողովուրդը կանգնեցրին Իկորի դէմ: Չնայած նրանք տասնեակ անգամներ նրանից վատթար յայտարարութիւններ են արել, մինչեւ էս օրն էլ անում են: Իկորի սխալը նրանք օգտագործեցին, եւ այնպէս՝ որ ժողովուրդը վռնտեց Իկորին իրենց օգնութեամբ:*

*Միաժամանակ ուղղակի հաւաքական ղեկավարութիւն էր, մինչեւ որ բնականօրէն Վազգէն Մանուկեանը դարձաւ ղեկավարը: Չնայած պաշտօնապէս ղեկավար յայտարարուած չէ: Ուրեմն ամբողջ գործը վարում է Վ. Մանուկեանը: Հենց որ Վազգէն Մանուկեանը ղեկավար դարձաւ, «Ղարաբաղի Կոմիտէ»ն սկսեց միկրոֆոն տրամադրել «անկախութիւն» քարոզողներին, Պ. Հայրիկեանի երեխաներին, որոնք բարձրացան հաթակ: Մովսէս Կորկիզեան անունով մի անձնաւորութիւն սկսաւ մի ժամից աւելի ամենաէժանդին ամբոխավարութիւնն անել իւրաքանչիւր անդամ, խաղալով ամբոխի ամենանուրբ զգացումների հետ, քարոզելով Հայաստանի անկախութիւն, պնդելով թէ Հայաստանը պէտք է դուրս գայ Ս. Միութեան կազմից, թէ հայ ժողովուրդի համար միակ ամենաոխերիմ թշնամին Ռուսաստանն է, թէ բարեկամութիւն պէտք է հաստատել ամերիկեան իմպերիալիզմի մաս կազմող Թուրքիայի հետ եւս՝ էն «Ղարաբաղ Կոմիտէ»ն, որ միկրոֆոնը ոչ մի գնով ոչ ոքի չէր համաձայնում տրամադրել ու զիջել: Մի օր նոյնիսկ բռնցքամարտի հասաւ գործը, երբ Ղարաբաղից՝ «Կռունկ» կոմիտէից եկած Արթուր Մկրտչեանը ուզում էր երկու խօսք ուղղել ժողովրդին, եւ չթողեցին խօսք ասի: Իկորն էր այդտեղ. փորձեց իր կարծիքը յայտնել, նոյնիսկ Իկորին ֆիզիքապէս ծեծելով համարեա թէ վռնտեցին այդտեղից: Այն Իկորին, որի առաջ ետեւի թաթերի վրայ մարդ էր գալիս, որի միքրոֆոնն էր նա պահում որ խօսի: Իսկ այդ նոյն մարդիկ այսօր միքրոֆոն են տրամադրում Հայաստանի անկախութեան ջատագովներին: Սա ցաւալի, ողբերգական իրադրութիւն է: Գրաւելով «Ղարաբաղի Կոմիտէ»ն, գրաւելով միքրոֆոնները, որոնք երբեք չեն փճանում, հոսանքը միշտ մատակարարւում է, Օփերայից Կորպաչովին են հայհոյում, եւ զարմանալին այն է, որ այդտեղ դրուած է յատուկ հեռախօս իրենց համար, որպէսզի նրանք միթինկի ընթացքում կապուեն ցանկացած տեղի հետ լուրեր ստանան, լուրեր հաղորդեն: Սա տարօրինակ չէ՞ միթէ: «Ղարաբաղ Կոմիտէ»ն, որը իբր թէ քննադատում է, հայհոյում է պետութեանը, եւ պետութիւնը նրան տրամադրել է ամէն միջոցներ, տեխնիկական միջոցներ: Դա մտածել է տալիս, թէ ո՞ւմ է սա հարկաւոր: Ես ուզում եմ որ չեչտէք եւ ընդգծէք այս հարցը, եթէ երբեւէ այս մեր զրոյցից որեւէ մի բան տպագրելու լինէք արտասահմանում: Մեզ տարօրինակ է թւում այս աջակցութիւնը, որը ստանում է «Ղարաբաղ Կոմիտէ»ն իշխանութիւնից:*

*Հնարաւոր է որ սովետական իշխանութիւնում երկու երանգ կայ, կորպաչովեան եւ հակա-կորպացովեան: Թւում է թէ նման աղմուկ-աղաղակը ձեռնտու է հակա-կորպաչովեան կողմին: Կասկածում ենք, վերջին 8-9 ամիսներին անընդհատ, անխափան աշխատում են բոլորսարքերը: Լոյսերը կարելի էր անջատել, հոսանքը կարող էին կտրել, հեռախօսը կարող էր փճանալ, կամ սկզբում հաթակում հեռախօս չկար, հեռախօսի գիծ անցկացնել եւ յատուկ համար տալ դրան ... Սա շատ տարօրինակ է:*

*Հենց որ մի քիչ Ղարաբաղի հարցը խաղաղւում է, անպատճառ պատահում է մի արտակարգ դէպք, կամ Սումկայիթ, կամ Խոճալու, կամ Մասիսի թունաւորում եւ կամ երէկուայ Ստեփանակերտի ջարդը:*

## «ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԻ ՀՍԿԱՅ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ»

*Հ.- Ղարաբաղեան այս շարժումը շատ լաւ սկսաւ, միասնական, արդարացի պահանջով՝ Ղարաբաղի վերամիացումը Խ. Հայաստանին: Սակայն դէպքերու ընթացքը զանազան տեղի թէ անտեղի պատճառներով տարբեր հուն տուին եւ մէջտեղ նետուեցան այլանդակ, անհեռատես ու վրտանգաւոր պահանջքներ, լոզունգներ, ձգտումներ: Այնպէս կարելի է ասել թէ շարժումը պառակտման մէջ է...:*

*Պ.- Պառակտումների մէջ է, այո: Եթէ ներկայի «Ղարաբաղ Կոմիտէ»ն մնայ շարժման գլուխը, Վազգէն Մանուկեանի ղեկավարութեամբ, այս շարժումը լաւ արդիւնքների յանգեցնել չի կարելի: Որովհետեւ Ղարաբաղեան հարցը «Ղարաբաղ Կոմիտէ»ի համար դարձել է երկրորդական, միայն առիթ, պատրուակ: Դրա հետ նրանք բարձրացնում են Ղարաբաղի հետ բացարձակապէս կապ չունեցող հարցեր: Առաջին՝ անկախութեան հարց: Քարոզում են հակառուսական տրամադրութիւններ, աշխատելով ապացուցել եւ հայ ժողովուրդը լարել, թէ նրա բոլոր դժբախտութիւնները գալիս են մի-միայն Ռուսաստանից եւ թէ թուրքերի հետ կարելի է բարեկամանալ: Վ. Մանուկեանի հետ վերջերս, մի քանի օր առաջ, «Ժողովրդական ճակատ» նոր կազմակերպուող ձեւնարկման ներկայացուցիչների հետ զրոյցի ընթացքում երբ հարցրել են, թէ ինչպէ՞ս էք դուք բարեկամութիւն քարոզում թուրքերի հետ, երբոր դա աներեւակայելի բան է, մեր բնական դարաւոր թշնամին է, ո՞նց կարելի է նրանց հետ բարեկամ լինել, նոյնիսկ եթէ նկատի չունենանք 1915ի եղեռնը, ինչպէ՞ս կարելի է դա, երբ մի ամբողջ երկիր կործանուեց, ոչնչացուեց, եւ այսօր քարոզել բարեկամութիւն:*

*Դա եթէ յիմարութիւն չէ, ուրեմն թշնամութիւն է հայ ժողովրդի նկատմամբ: Մենք գտնւում ենք Ռուսական կայսրութեան կազմին մէջ, ինչպէ՞ս*

(Շար.ը տեսնել 10րդ էջ)

# ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*(Շար. 3րդ էջէն)*

*կարելի է բարձրացնել հայ ժողովուրդը մի հսկայական կայսրութեան դէմ: Դա սխալ է, ինքնակործանում, աղէտ: Եթէ «Ղարաբաղի Կոմիտէ»ն մնայ շարժման գլուխը, Հայաստանին մօտաւորապէս նոյն ճակատագիրն է սպասում, ինչ որ հասաւ Արեւմտեան Հայաստանին: Սա մենք գիտակցում ենք եւ դրա համար միջոցների ենք ձեռնարկում:*

*Առաջինը՝ շարժել ենք եւ փորձում ենք տեղից շարժել մեր մտաւորականութեանը, յատկապէս նրա հեղինակաւոր մասին, որպէսզի նրանք «Ղարաբաղ Կոմիտէ»ի հակակշիռը ստեղծեն, մի նոր կազմակերպութիւն: Փորձեր եղան «Ազգային ճակատ» կազմել – անյաջող: Թերեւս կազմակերպիչը ինքը տեղից անյաջողն էր: Փորձուեց կազմակերպել «ժողովրդային ճակատ», այն ըստ երեւոյթին կ'իրականացուի:*

*Մենք՝ «Հայ Դատ»ը, մեր ներկայացուցչական խորհուրդում «ժողովրդական ճակատ»ի ծրագրերը քննարկել ենք եւ ընդունել ենք այն որպէս դրական, եւ պաշտպանել ենք նրանց:*

*Տառացիօրէն երէկ հանդիպում էր «ժողովրդային ճակատ»ի ներկայացուցիչների հետ՝ Սօս Սարգսեանի գլխաւորութեամբ, Փոլիթեքնիկ ինստիտուտի դասախօսներից Արամ Սիմոնեանը եւայլն: Ներկայացուցիչները հրաւիրել էին նաեւ մեզ, ես եւ Շողիկը ներկայ էինք: Այնտեղ փորձ է արւում կազմակերպելու «ժողովրդային ճակատ»: Երէկ, անուան հարցն էր դրուած, որոշեցինք անուանել «Ազգային դաշինք»: Նաեւ վիճաբանութիւն գնաց թէ հասարակական այդ կազմակերպութիւնը ինչ կառուցուածք պիտի ունենայ: Անհատական մասնակցութիւն կազմակերպութեա՞նը, թէ՞ կազմակերպութիւնների մասնակցութիւն: Այսինքն, օրինակ, «Հայ Դատ»ը դրա մէջ մտնի որպէս կազմակերպութի՞ւն, թէ՞ անհատներ պիտի մտնեն: Հարցը վերջնականապէս լուծուած չէ: Բայց կարեւորն այն է, որ երէկ որոշեցին նաեւ, որ « ժողովրդային ճակատ»ի նախկին՝ այսպէս ասած սիմպոլը՝ Սիլվա Կապուտիկեանը հանուի կազմից: Ս. Կապուտիկեանը իր յարաբերութիւններով կառավարութեան ու Կեդրոնական Կոմիտէի հետ, ժողովուրդի աչքում վարկաբեկուած է: Ժողովուրդը նրան չի ուզում: Ճակատը կազմակերպւում է Սօս Սարգսեանի անուան շուրջ, նա ժողովրդի մօտ հեղինակութիւն ունի: Մենք բոլոր ուժերով, բոլոր միջոցներով պիտի աշխատենք, որ անպայման դա կազմակերպուի որպէս ալթերնաթիվ «Ղարաբաղի Կոմիտէ»ին պրովակացիոն գործունէութեանը:*

*Մենք բոլոր հիմքերն ունենք կարծելու, որ նրանք ղեկավարւում են նոյն կեդրոնից, ինչ որ ղեկավարւում էր Պ. Հայրիկեանը՝ էդ պապից աւելի պապականը: Ի միջի այլոց, վերջերս Պ. Հայրիկեանը արտասահմանից զանգելով Յակոբջան Թադեւոսեանին, յայտարարել է նրան, թէ ինքը ոչ թէ ազգային գործիչ է, այլ քաղաքական գործիչ: Փառք Աստուծոյ: Թող գնայ քաղաքական գործունէութեամբ զբաղուի որտեղ որ ուզում է, միայն թէ խնայի Հայաստանին: Թող Հայաստանի քաղաքական գործունէութեամբ չզբաղուի, մնացեալ ամբողջ երկրագունդը իրեն փեշքաշ ու նուէր:*

*Հ.– Նոր կազմակերպուող «Ազգային դաշինք»ին վերաբերեալ: Իմ կողմէս, մտածելով, ինչո՞ւ այդ կազմակերպութեան անունը չդնել «Արմենիզմ»:*

*Պ.– Հիանալի տերմին էր: Դա կարելի օգտագործել եւ այդ ուղղութեամբ պէտք է աշխատել:*

*Հ.– «Արմենիզմ» ըսելով ո՞չ միայն Հայաստանը ունիմ միտքիս մէջ, այլեւ ամբողջ երկրագունդով մէկ տարածուած աշխարհասփիւռ հայերն ալ ընդգրկելով կամաց-կամաց: Մշակել է պէտք յատուկ ծրագիր-կանոնագիր, աշխատելակերպ, հայ ժողովուրդի գոյութիւնը պահելու տեսակէտէն: Պէտք է դնել հիմը Արմենիզմին:*

*Պ.– Պատկերացրէք, մենք չենք մտածել այդ ուղղութեամբ:*

## «ՀԱՅ ԴԱՏ»Ի ՆՊԱՏԱԿԸ

*Հ.– Ի՞նչ են «Հայ Դատ»ի նպատակները. կարող էք համառօտ քանի մը խօսք ըսել այդ ուղութեամբ:*

*Պ.– Ելնելով ներկայ դրոյթից, հայ ժողովրդին հարկաւոր է մնալ Ռուսական կայսրութեան սահմաններում, ուրիշ հնարաւորութիւն չունենք: Ոչ թէ դա դրա համար որ մենք ֆիլանթրոփական սէր ենք տածում ռուսների նկատմամբ: Ո՛չ, մենք կարծում ենք որ դա գոյութիւն ունեցող չարիքներից նուազագոյնն է: Այս իրապաշտութիւնից ելնելով հայ ժողովրդի արդի գոյութիւնը պիտի մնայ Ռուսաստանի կազմին մէջ:*

*«Հայ Դատ»ի նպատակն է աշխատել ձգտել վերամիացնելու Սովետական կայսրութեան մէջ գտնուող հայկական տարածքները, հողերը, այսինքն նկատի ունենք Ախալքալաք, Սխալցխա, Նախիջեւան եւ Արցախը ընդհանրապէս, այն մասը որ այսօր էլ դեռ հայաբնակ է, Քուռից հարաւ ընկած տարածքները՝ Դաշտային է Լեռնային Ղարաբաղները:*

*«Հայ Դատ»ի նպատակը այսօր էլ, յետագայի համար էլ դա է: Աշխատել միաւորել, աշխատել հաւաքել ՍՍՀՄ ներքին՝ Հայաստանի վարչ. հողի վրայ: Այսօրուայ տուեալներով ՍՍՀՄի սահմաններում մօտաւորապէս 6 միլիոն հայ կայ. նոյնիսկ կարող է աւելի լինել: Եթէ նրանք հաւաքուեն մի տարածքի վրայ, թէկուզ խորհրդային որեւէ հանրապետութեան մէջ: Եթէ կորպաչովեան դեմոկրատիզացիան յաջողուի եւ որոշակի ներքին ինքնավարութիւն ստանալու դէպքում մենք կարող ենք կոնկրէտ, ռէալ ուժ ներկայացնել եւ հեռու ապագայում մի գուցէ հիմք դնենք անկախութեան: Դա մեր սերնդի գործը չէ: Յաջորդ սերունդը՝ ինք թող մտածի այդ մասին: Մեր սերնդի գործը պիտի լինի միաւորել հայկական հողերը, հնարաւորին չափ հաւաքել հայութիւնը այդ հողի վրայ: Դա կը լինի մեր մաքսիմումը՝ որքան մենք ձգտում ենք: Եթէ մենք դրան յանկարծ հասնենք, ուրեմն գերակատարած կը լինենք մեր վրայ դրուած պարտականութիւնները:*

*«Հայ Դատ»ի հեռակայ նպատակներն են նաեւ Արեւմտեան Հայաստանի հողերի Թուրքիայից ազատագրելը: Բայց դա դեռ հնարաւոր չէ, քանի դեռ այստեղ հայկական մի նշանակալից ուժ գոյութիւն չունի, որի վրայ կարողանային յենուել թէկուզ այս կամ այն պետութեան շահերը:*

*Հ.– Ի՞նչ աշխատանք կը տարուի հայրենալքումի, արտագաղթի այս ահաւոր վտանգաւոր շարժումը, հոսանքը կասեցնելու ուղղութեամբ:*

*Պ.– Այո՛, եթէ պիտի խօսենք դրա շուրջ, այ պիտի անդրադառնանք այդ չարաբաստիկ Պ. Հայրիկեան կոչուածին, որ այսօր նոյնիսկ յաւակնում է Եւրոպական Խորհրդարանում հանդէս գալ իբրեւ հայ ժողովրդի ներկայացուցիչ, դեսպան: Խայտառակութիւն է: Ի՛նչ արած, դա մեզնից չի կախուած: Մենք ամբողջութեամբ դէմ ենք արտագաղթին, գէմ ենք ուղն ու ծուծով, բայց ցաւօք, մեզնից գրեթէ ոչինչ կախուած չէ, բացի քարոզչութիւնից: Մենք քարոզում ենք չգնալ, հիմնաւորելով հայրենասիրութեամբ, իսկ սիոնիզմը քարոզում է գնալ՝ հիմնաւորելով նիւթական օգուտով: Այդ նիւթական օգուտները, որ նրանց խոստանում են, նոր, սիրուն, մոտայիկ աւտոմեքենաներ, լաւ ապրելակերպ, տոպարներ, շատ աւելի են ներգործում, քան թէ մեր հայրենասիրական քարոզները: Դրա համար մենք պարտւում ենք, նրանք յաղթում: Արտագաղթը սարսափելի թուերի է հասնում: Պ. Հայրիկեանը արտասահմանում՝ Ամերիկայում յայտարարել է, թէ գնալով Ամերիկա եւ տեսնելով կեանքի մակարդակը այդտեղ, ինքը սրանից յետոյ պիտի հանդէս գայ հնարաւորին չափ աւելի շատ հայ Հայաստանից տեղափոխելու օգտին: Նա եւ Բագրատ Շահվերտեանը Ռեկրնին դիմել են, պահանջելով որ հայերի համար նախատեսուած վիզաների քա–նակը, լիմիթը աւելացնել: Ի՞նչ ասեմ, յանցագործութիւն բառը քիչ է, սարսափելի բան է, մայն թուրքը կարող է անել դա: Սա կարող էր Աթաթիւրքը անել, բայց երբ որ հայի անձնանուններով են անում, դրանք շատ աւելի [illegible] թիւրքից: Ես ուրիշ կերպ չեմ կարող դա գնահատել:*

*Հայ մտաւորականութեանը՝ մենք ամէն կերպ աշխատում ենք դրդել, որ վերջապէս՝ բաւական է, տեսէք ինչ է կատարւում, չի կարելի ձեռները ծալած նստել ու նայել թէ ինչպէս են ժողովրդին տանում դէպի կործանում, երկիրը պարպում: Եթէ մտաւորականութեան շուրջը, առողջ ուժերի շուրջ կարենանք համախմբել ժողովրդին եւ նրան պոկենք Սիոնիզմի քարոզիչներից, որոնք ծառայում են նաեւ ատրպէյճանական շահերին, Թուրքիզմին, բայց ոչ հայ ժողովրդին: Նորից մեր արեան գնով ուզում են լուծել միջազգային իրենց կեպղտոտ հարցերն ու հաշիւները:*

*Հ.– Իսկ ինչպէ՞ս է մեր՝ իշխանութեան վրայ գտնուող ղեկավարութեան գործունէութիւնը այս ուղղութեամբ:*

*Պ.– Ինձ թւում է որ իշխանութիւնը իր ունեցած հնարաւորութիւններ չի օգտագործում ոչ թէ այն պարճառով որ նրանք չեն հասկանում ինչ է պատահում: Ինձ թւում է թէ իշխանութեան վերեւն էլ նստած ինչ որ ուժեր կան, որ թոյլ չեն տալիս, սանձած են պահում: Ղեկավարութիւնը ակտիվ մասնակցութիւն չի ունենում: Ժողովուրդը մեծ վերապահութեամբ է մօտենում ղեկավարութեան ասածներին: Մեր ասածները ժողովուրդը անմիջապէս ընկալում է: Իսկ մենք հնարաւորութիւններ չունենք շատ լայն չափերով գործելու: Մեր ամսագրի տպաքանակը շատ չնչին է, շուրջ 300 օրինակ: Աւելին չենք կարողանում տպել, նիւթական միջոցներ չունենք:*

***

*Զրոյցս «Հայ Դատ»ի զինուորագրեալներուն հետ կը վերջացնեմ: Արդէն ուշ գիշեր է: Ցաջողութիւն կը մաղթեմ իրենց: Տղոցմէ մէկը գիս կը հասցնէ բնակութեանս վայրը, այլապէս շատ դժուար էր ինքնաշարժ ճարելը: Քաղաքը դեռ իր ալեկոծ վիճակին մէջ էր, թէեւ խաղաղած առժամապէս, դիշերուան մթութեան պատճառաւ: Վաղը նորէն ոտքի կանգնելու, նորէն հաւաքուելու թատերական հրապարակը: Մինչեւ ե՞րբ այս խայտառակութիւնը, այս անարգանքը, անտեսումը, որ հոգեկան մաշեցումի, յուսալքելու քաղաքականութիւնն է:*

Երեւան, 8 Նոյեմբեր 1988